Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 623 - Ա որոշման

«Ամասիա համայնքի «Նանե նախակրթարան» ՀՈԱԿ-ի տանիքի մասնակի բարեկարգում»

ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	«Արաբկիր» Միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակի հետ համատեղ իրականացվող «Զարգացման խանգարումներ ունեցող երեխաներին մատուցվող բազմապրոֆիլային ծառայությունների հզորացում» ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Ամասիա համայնքի մանկապարտեզի տանիքի ջրհավաք և ջրահեռացման խողովակների տեղադրման և գլխավոր մուտքի հովհարի պատրաստման աշխատանքները:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Բարեգործը	ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակ
4.	Ծրագիրը կատարողը	«Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղաք Երևան, Մամիկոնյանց 30, ՀՎՀՀ՝ 00009237)
5.	Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը	Ամասիա համայնք, 26փ, 6շ , սոցիալական բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն կազմում է 1,620,300 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Ամասիա համայնքի «Նանե նախակրթարան» ՀՈԱԿ
8.	Ծրագրի իրականացման տեւողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2021 թվականի հուլիսի 28-ից, մինչեւ օգոստոսի 30-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ժամկետում նախատեսվում է Ամասիա համայնքի մանկապարտեզի տանիքի ջրհավաք և ջրահեռացման խողովակների տեղադրման և գլխավոր մուտքի հովհարի պատրաստման աշխատանքները:

		Ծրագիրը նախատեսվում է 2021 թվականի հուլիսի 28-ից մինչեւ օգոստոսի 30ը: Արժեքը՝ 1,620,300 ՀՀ դրամ
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները եւ նախատեսվող գինը	Նախատեսվում է աշխատանքների իրականացում համաձայն կնքված պայմանագրի թիվ 1 հավելվածի: Արժեքը կազմում է 1,620,300 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն Ամասիա համայնքի հետ
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու եւ գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվի տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Տ. ԱՎԻՆՅԱՆ

28.07.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ